ԱՇԽԱՐՀԻ ՄԱՄՈՒԼԸ՝ ԱՐՑԱԽԻ ՄԱՍԻՆ

Բուլղարահայությունը, ինչպես համայն հայությունը աշխարհի մեջ, մտահոգված է Հայաստանի կացությամբ, Արցախի վիճակով: Մենք նույնպես ցանկանում ենք, նույնիսկ պահանջում ժամ առաջ լուծել Առնային Ղարաբաղի հարցը, որպեսզի հայ ժողովուրդը հանգիստ կերտի իր ապագան:

Բուլղարահայերիս մոտ խոր վրդովմունք առաջացրին ադրբեջանական ազգայնամոլ ուժերի վայրագությունները հայերի հանդեպ Սումգայիթում, Բաքվում և այլուր, և մանավանդ այն հանգամանքը, որ այդ անմարդկային դեպքերին շտրվեց քաղաքական գնահատական խորհրդային երկրի կենտրոնական իշխանությունների կողմից:

Մենք տագնապով հետևում ենք դեպքերին Հայաստանում և Արցախում, մեզ մտահոգություն են պատճառում ազգամիջյան բշնամական հարաբերությունները, հարհրդային Միության ղեկավարների ոչ բարյացակամ դիրքորոշումը Ղարաբաղի հարցում, դեպքերի ոչ օբյեկտիվ լուսաբանումը խորհրդային կենտրոնական լրատվական միջոցների կողմից:

Բուլղարահայերի տագնապների, մտատանջությունների, վրդովմունքի արտահայտությունն է հանդիսանում «Երևան» կազմակերպության նախագահ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սարգիս Սարգիսյանի գիմումը աշխարհի բոլոր հայերին՝ տպագրված բուլղարահայ «Երևան» թերթի օգոստոսի 11-ի համարում, որն ուղարկում ենք ձեզ:

Կարո ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

«Երևան» թերթի գլխավոր խմբագիր

Սոֆիա